

ՄԵԼԻԿ

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուրլի. կես տարվանը 6 բուրլ.
Առանձին կամարները 5 կոպեկով.

Քիֆիստով գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисе, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԵԼԵՓՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաջօրեայ).

Շաբաթադրութիւնը ընդունվում է ամեն լիզովով.

Շաբաթադրութիւնների համար վճարում են
խառնադրութիւնը տողաւորով 10 կոպեկ.
ՏԵԼԵՓՈՆ № 253.

Открыта подписка
на ежедневную общественно-политическую и литературную газету

„ВОЗРОЖДЕНИЕ“

1-й № выйдет 1-го Октября.

ПОДПИСНАЯ ЦЕНА

Для городских подписчик. с доставкой на годъ 6 р. на 6 м. 3 р. на 3 м. 1 р. 50 к. на 1 м. 50 к.
для иногородных » » с пересылкою » » 7 р. » 3 р. 50 к. » 1 р. 75 к. » 60 к.

Подписка принимается въ конторѣ газеты «Возрождение». Тифлисе Головинскій прос.
домъ бр. Зубаловыхъ. (входъ съ Давидовской ул.)

Плата за объявленія: за строку петита впереди текста 10 к., позади текста 5 к.
Съ Января 1906 года «Возрождение» будетъ выходить съ еженедѣльнымъ иллюстрирован-
нымъ приложеніемъ (съ каррикатурами), при чемъ оба изданія будутъ стоить 10 руб.

Редакторъ П. А. Готуа

Редакторъ-Издатель Кн. П. І. Тумановъ.

Ամառիս, Հոկտեմբեր և Քրիստոսօր Մարդուկեանցները սրտի խորին կսկիծով ծանու-
ցանելով առաջինի ամուսին, երկրորդի տաղը և երրորդի եղբայր

ՆԵՐՍԷՍ ՄԱՐԴՈՒԼԵԱՆՑԻ

անակընկալ մահը, որ տեղի է ունեցել Բաղրամյանի արարած փիլի աղետի օրերում, յայտ-
նում են ծանոթներին և բարեկամներին, որ սեպտեմբերի 18 ին, կիրակի օր, Վաթի
մայր եկեղեցում կը կատարվի հոգեհանգիստ պատարագից յետոյ ժամի 11-ին: 1—2

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Դպրոցների բացման դռները. Վերջին
տեղեկություններ. — Ներքին Տնօնօրին.
Նկարչական ցուցահանդես. Կովկասը և Մա-
մուլը. Բաց նամակ. Անգլիական Ֆերմաները
Բագուում. Հայոց լեզուի կուրսերի առթիվ.
Նամակ Նոր-Բայազետից. Նամակներ Խմբագ-
րութեան, Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. —Նամակ Պարսկաստանից. Արտաքին
լուրեր. — Հեռագրեր. — ՏԱՅՏԱՐԱՐՈՒՄ
ԹԻՒՆՆԵՐ:

ԴՊՐՈՑՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԴԱՆՈՒԴՆԵՐ

Դպրոցների բացման գործը ամեն
տեղ միատեսակ դիտարկմամբ առաջ չը
գնաց: Մի քանի տեղերում ամեն բան
կարգադրված է, հոգաբարձուները ընտր-
ված են, ուսուցչական խումբը կազմված,
աշակերտների ընդունելութիւնը կատար-
ված և վարկանից կը սկսվեն կանոնաւոր
պարապմունքները:

Մակիյան շատ տեղերում դեռ թերու-
թիւններ կան, որոնք պէտք է լրացվեն,
որպէս զի կարելի լինի ուսուցիչ սկսել:
Հոգաբարձուների ընտրութիւնը ուշացել
է և նրանք ժամանակ և հնարաւորու-
թիւն չեն ունեցել դպրոցական բոլոր
պահանջները հոգալու և գործը սկսելու:

Խոչընդոտները մէկն էլ պէտք է այն
համար, որ դպրոցական կալուածները
դեռ չեն յանձնված հայ հոգեւոր իշխանու-
թեան: Բացի դրանից մի քանի տեղերում
կովկասեան ուսումնական շրջանի վար-
չութիւնը անցնող տարվանից կազմել էր
ուսուցչական խմբեր, որոնք և համարում
էին իրանց հրաւիրված կամ վարձված:
Ուսումնական վարչութիւնը մի քանի
խմբերի վերաբերութեամբ արդէն յայ-
տարարութիւն է տուել, որ ուսուցչինե-
րը սեպտեմբերի 1-ից համարվում են
բոլորովին ազատ, միւսների վերաբերու-
թեամբ նա ցանկանում է բանակցել հա-
յոց հոգեւոր վարչութեան հետ, որ գոնէ
առաջին տարվայ համար տեղեր հոգացվեն
հրաւիրված ուսուցչիներ համար: Այդ և
դրանց նման հարցեր գործնականապէս և
արագ լուծելու նպատակով Փոխարքայի
գլխահատուկը դիմել է Վեհափառ Կաթո-
ղիկոսին, խնդրելով, որ Վեհափառը իր
կողմից նշանակէ իրագոր մի անձն, որ և
անմիջական յարաբերութեան և բանակ-
ցութեան մէջ մտնելով ուսումնական
վարչութեան հետ աւարտէ դպրոցների
յանձնման գործը:

Անկասկած էջմիածինը իր կողմից կը
շտապէ օր առաջ լիազոր նշանակել և
եղած խոչընդոտները վերացնելով բանալ
դպրոցի դռները հայ մանուկների համար,
որոնք անհամբեր սպասում են ուսման
սկզբնաւորութեան:

Դպրոցները այնպէս եռանդով և արագ
չը բացվեցին, որքան ցանկալի էր: Մեզ
խանգարեցին շատ հանգամանքներ: Գոնէ
այսուհետեւ աշխատենք չը դանդաղեցնել
գործը և ոգևորութեամբ անձնատուր լի-
նենք դպրոցական խիտ ցանց կազմելու
իրականացման:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանձակի զինւորական նահանգապետ
գեներալ Տակալյալիւն երկու օրով եկել
էր Թիֆլիս գեղեցիկանիւր նահանգի գրու-
թեան և իր ձեռք առած միջոցների մա-
սին: Նա նորից ուղևորվեց իր նահանգը:
Գեներալ Տակալյալիւն է յանձնվում
նոյնպէս Ձանգեղուրի գաւառը, որը մին-
չե այժմ գտնվում էր պրինց Նապոլէօնի
հակոյրութեան տակ: Ենթադրվում է, որ
աւելի յարմար կը լինի նահանգի բոլոր
մասերը կենտրոնացնել միևնոյն անձերի
ձեռքում:

Օգտվելով գեներալ Տակալյալիւն ներ-
կայութիւնից Թիֆլիսում, Շուշու քաղաքի
բնակիչները մի պատգամաւորութիւն
ներկայացաւ գեներալին և յայտնելով
Ղարաբաղի կարիքների մասին, խնդրեց
աջակցութիւն շուտով վերականգնելու
խաղաղութիւն Գանձակի նահանգում: Գե-
ներալ Տակալյալիւն իր պատասխանի մէջ
յայտնեց, որ թէև հայերի կողմից ևս տե-
ղի են ունեցել մասնաւոր բացառութիւն-
ներ, բայց ընդհանրապէս, հայերը բռնած
են եղել պաշտպանողական դիրք և դի-
մադրել են յարձակումներին: Գեներալը
յոյս ունի, որ շուտով խաղաղութիւնը կը
վերականգնէ ամենուրեք:

Գանձակի շրջակայքում տեղի ունեցած
վերջին դէպքերը անհանգստութիւն են
պատճառում ազգաբնակչութեան: Գետա-
շէն գիւղի հայերը վստահանալով հրատա-
րակված խաղաղութեան վրա, գնում են
դէպի Գէօրան երկրագործական աշխա-
տանքի: Սակայն նրանք ենթարկվում են
թուրքերի յարձակման: Սպանված են
հինգ գիւղացիներ բոլորովին անմեղ տե-
ղը և միայն այն պատճառով, որ հաւա-
տացել են թէ նրանք կարող են ազատ
անցուղարձ անել շրջակայքում:

Ձանգեղուրի գաւառում պրինց Նապո-
լէօնին աջակցեց պարզել սուկալի իրա-
կանութեան բնորոշ մանրամասնութիւն-
ները: Եթէ այնտեղ եռանդուն միջոցներ
չը գործադրվեն, անշուշտ նորից առաջ
կը գան բարդութիւններ, որովհետեւ խո-
վարար մարդիկ չեն վերջացրել իրանց
յանցաւոր գործունէութիւնը:
Այդ գաւառի Հարար հայ գիւղի մասին

մինչև այժմ չունենք բաւարար գոնացու-
ցիչ տեղեկութիւններ: Մենք հաղորդել
էինք, որ այդ գիւղը ենթարկվել է աս-
պատակութեան և կարծում էինք, որ
գիւղացիները վերադարձված են իրանց
գիւղերը և ապահով վիճակի մէջ են.

սակայն, ինչպէս երևում է, այդ թշուա-
ղիւր բնակիչների մի մասի գրութիւնը
որբերակալն է: Երէկ մեր խմբագրա-
տուն մտաւ հարաբերի մի գիւղացի և
ցոյց տուեց իր ստացած հետեւեալ հեռա-
գիրը.

«Հարաբերիցից գերի են ընկած
թուրքերի մօտ: Միջոցներ են ձեռք առն-
վում նրանց ազատութեան համար»:

Բագուի մէջ կայացած հաշտութեան
պայմանագրերը չը վաւերացվեց, որովհե-
տե թուրքերի կողմից առաջարկվեցին մի
քանի նոր փոփոխութիւններ, որոնք դեռ
ընդհանուր համաձայնութեամբ չեն ըն-
դունվել վերջնականապէս:

Բագուում փոքր ինչ աւելի է հանգս-
տութիւնը, քան մի քանի օր սրանից ա-
ռաջ, բայց և այնպէս դեռ բնակիչները
չեն վստահանում ազատութենէ շրջակայի
քաղաքի բոլոր մասերում: Հայերը զգու-
շանում են թուրք կառավարների պա-
հած կառքերով երթևեկել, որովհետեւ ան-
ցեղայնեցում է շատերը վնասներ են կրել
իրանց գիւրահաւատութեան պատճառով,
իսկ կառավարները մեծ մասը թուրքեր
են, իսկ փոքր մասը մոլօկան և հայ:

Բագուի նաւթաշրջանում սկսվել է
գործունէութիւն, թէև դեռ ոչ ընդար-
ձակ: Նաւթահանքերի և գործարանների
պաշտօնեաները և բանւորները երկիւղ են
կրում նոր յարձակումներից:

Չորքերի թիւը աւելանում է:
Բագուում պէտք է հաստատվի քաղա-
քապետութիւն: Իսկ նահանգապետը
պէտք է տեղափոխվի մի ուրիշ տեղ:
Հաւանական է, որ նահանգապետի մըշ-
տական բնակատեղ նշանակեն Շամախին,
որ մի կէս դար սրանից առաջ նահան-
գական քաղաք էր:

Ատարա, 13 սեպտեմբեր
Ճանապարհի վրա գտնվող ծովափնեայ քա-
ղաքներում շարունակ հաւատացնում էին, որ
թուրքները ամենից շատ վտանգաւոր է Արդա-
բիլ քաղաքում, որտեղի ազգաբնակչութիւնը
աւելի վայրենաբարոյ և զրգոված է հայերի
դէմ, քան միւս քաղաքներին: Ի միջի այլոց
ինձ պատմեցին հետեւեալ փաստը: Նորբա
Արդաբիլ է գալիս Բագուից թուրքերի մի
խումբ: Դրանից մէկը իր հետ բերում է Բագ-
ուում հայերից սպանված իր աղջկայ դիակից
կարած ձեռքը և սկսում է դրանով մահմե-
դական ազգաբնակչութեանը զրգելը հայերի
դէմ: Դրա տպաւորութեան տակ Արդաբիլի
բնիկ մահմեդականներից մէկը, որ պարսից
դատարանում ֆարաշ է, սպանում է մի հայի
և պատմելուց խոստովանում համար զբաւա-
ր է մտնում: Տեղական պարսից մուշտեղը հան-
գրտացնում է մահմեդականների յուզմունքը
որի համար արժանանում է պարսից Շահի
հեռագրական շնորհակալութեան: Շահը նաև
պատուիրում է հեռագրով հային սպանող
պարսիկն մահվան պատժի ենթարկել, երբ նա
բանտից դուրս կը գայ:

Այստեղ ընդհանուր դրութիւնը միթերա-
կան է, չը նայելով որ Բագուից փախած
թուրքերը աշխատում են տեղիս մահմեդական
թուրքերը աշխատում զրգելը հայերի դէմ, ու-
ղեց թիւը մօտ 70 է: Մի քանի օր սրանից
առաջ Ատարաշուքն է եղել պարսից Շահը
որ կանչել է իր մօտ մահմեդականներին ներ-
կայացուցիչներին և նրանցից երաշխաւորու-
թիւն են պահանջել մահմեդականների կար-
գապ հոլութեան համար:

Մի և նոյն մտքով Շահը խիստ պատուէր-
նի է տուել նաև պարսից մարտական բե-
լի

գիացի կառավարչին, որի բնակարանում ին-
քը երկու օր մնացել է: Այդ կառավարչը
պատուէր է ստացել որ և է ընդհանուր պա-
տահած գէպը կանչել երկու կողմերի ներ-
կայացուցիչներին և նրանց հաշտեցնել մի-
մեանց հետ:

Չուլֆա, սեպտեմբերի 11 ին: «Այսօր
տեղա ժամանեց գեներալ-նահանգապետ պրինց
Նապոլէօնը Նախիջևանի գաւառապետ պ. Էն-
կելի հետ: Պրեստաի կարգադրութեամբ այս-
տեղ հաւաքվեցին Չուլա գիւղի բնակիչները:
Գեներալ-նահանգապետը իջևանեց պ. Մաք-
սապետի տանը, որտեղ և հաւաքվեց ամբողջ:
Կային և բաւականաչափ թուրքեր ոչ ազգե-
ցիկներից: Գեներալ-նահանգապետը դուրս
գալով պատշաճ, ազգու խօսքերով սկսեց
խրատել ժողովը խոյս տալու հար մարդ-
կանցից, որոնք այսօրն արին թափեցին
Անդրկովկասում: Հայերը պատասխանեցին
պրեստաի միջոցով, որ ոչ մի ժամանակ ի-
րանք անկարգութիւն չեն արել, ամեն տեղ
միշտ նախապաճակ եղել են թուրքերը, ինչ-
պէս յայտնի է նաև Նորին Բարձրութեան:
Երբ ժողովուրդը դեռ գնւ. նահանգապետի
մօտ էր, մեզ լուր հասաւ, որ թուրքերը քշել
տարել են Տանալիքում գիւղի տաւարը: Երևա-
կայեցէ, ընթերցող, դու 2—3 ժամ չէ ան-
ցել, որ այնտեղից անցել է Նորին Բարձրու-
թիւնը: Կողորդելու արցունքներ թափող մեր
թուրք հարեանները չեն սպասել, որ գոնէ
նահանգապետը հեռանա գաւառից... Այդ
մասին յայտնվեց պրինց Նապոլէօնին. իսկ
մեր ժողովուրդը լսելով այդ լուրը սարսա-
փահար եղաւ, մտածելով, որ հէնց այսօր նա-
հանգապետի գնացուց յետոյ նոյնը կարող է
կրկնվել և այստեղ:

Հայերի կողմից ներկայացրին պրինց Նա-
պոլէօնին երկու խնդրագիր, որով խնդրում
էին կօղակներ շնչանակել և իրաւունք տալ
ժողովրդին զինվելու: Գործում ենք, որ ոչ մի
միջոց չի ազգել թուրքերի վրա և միայն հա-
յերի զինվելը և կօղակները կարող են զսպել
զազանացած ամբիւրի կրքերը:

Մահաւատ
Սահաւատ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՐԱՊԱԿԱՆ ՑՈՒՑԱՎԱՆՆԵՐ

I

Թիֆլիսում բացվել է նկարչական ցու-
ցահանդէս, որ պարունակում է իր մէջ
կովկասեան նկարիչների վերջին տարվայ
արտադրած աշխատանքները:
Ցուցահանդէսին մասնակցում է նկա-
րիչների միայն մի մասը: Այդ նկարիչ-
ները, խմբվելով միասին, կազմել են փո-
խադարձ օգնութեան մի ընկերութիւն,
որի նպատակն է ամեն կերպ օգնել նկա-
րիչների գործունէութեան զարգացման և
նպաստել փոխադարձ օգնութեան ան-
հրաժեշտ դէպքերում:

Նկարչական ցուցահանդէսները, որ առաջ
բոլորովին անծանօթ և նոր երևոյթ էին
կազմում մեր մէջ, սկսում են շարժել
հասարակութեան հետաքրքրութիւնը: Հա-
յոց առաջնորդութիւններ են արել մեր
նկարիչները, ինչ նոր թեմաներ են մշա-
կել նրանք իրանց ստեղծագործութիւն-
ները մէջ և ինչ բնաւորութիւն են ստա-
նում մեր նկարիչների ստեղծագործու-
թիւնները թէ անհատական և թէ ընդ-
հանուր տեսակետներով: Միւս կողմից
իրանք նկարիչները, զբղւած զգալով կանգ-
չառնել և մշտապէս առաջ գնալ, ցանկա-
նում են ցոյց տալ հասարակութեան ի-
րանց աշխատանքի արդիւնքը և այդպի-
սով թէ հանդէս հանել իրանց ստեղծա-
գործութիւնները և թէ ենթարկել նրանց
թէ մասնագէտների և թէ ընդհանրա-
պէս հասարակութեան ընդհատութեանը:

Թէև ցուցահանդէսը ճոխ և բազմանը-
կար ցուցահանդէսներից չէ և թերու-
թիւններ կան գործերի մէջ, բայց և այն-
պէս հաճելի է մեզ համար արձանագրել,
որ նկարիչների լրձինի մէջ մենք նկա-
տում ենք կատարելագործութեան և ա-
ռաջդիմութեան նշաններ:
Միւս անգամ մենք կը հաղորդենք
մեր տպաւորութիւնները: Սիրող

II

IV

V

VI

УД

VIII

ԲՆՑ ԶԱՄԱԿ

Ընդհանուր ազի այս ծանր օրերին ես է
ընթերցող, հեռու հիւսիսից շտապում է
խառնել իմ արասառուները ձերի հետ, հի
զով միանալով ընդհանուրի վշտին:
Ես ուղաջոյ, ես նոր էի ուղուկ իմ ուր
խութեան ողորմներս ուղարկել հայրենի եր
կրին, մեր ազգային տունը—պարոններ և կ
լուածներին վերադարձման առթիւ, երբ վր
հասաւ կոտորածի բռնի և ուրախութեան
զգացումները տեղի տուցի մի նոր կարգին..
Օ, անողորմ ճակատագիր, մինչև երբ պէ՛ս
է հայաժող հային...

Ինչպէս որ կան բազմաթիւ և անբազմաթիւ մարդեր, այնպէս էլ բազմաթիւ և դժբաղդ ազգեր. այդպէս ենք և մենք՝ հայերս, ճակատագրով միշտ հալածել է մեզ. ուրախութեան և բարօրութեան օրերը միշտ շատ կարճատև են եղել: Այդպէս էլ այժմ. հէնց նոր էր անցել հայի երեսից անբաժան թախիծը, երբ վրա հասաւ այս կոտորածը...

Մեր երկիրը նորից արեան և կրակի ճարակ է դարձել: Ճիշտ է, բազմաթիւ շատ սակաւ է ժպտացել հային, բայց ո՞վ կը սպասէր թէ XX-դ դարում, եւրօպական պետութեան մէջ, հայը կենթարկվի այդպիսի բարբարոսական հալածանքի: Եւ միթէ դա իրականութիւն է. միթէ երազ է. երբ աչքով չես տեսել եղիւթիւնը—թուով է թէ դա մի ծանր երազ է, մի կոշմար:

Ո՛հ, ինչ անմիտ եղբայրսպան կոտորած: Աւերել, այրել միմեանց տարիներէ ընթացքում արին քրտինքով ամբարված աշխատանքը. ինչ անմիտ բան. և ինչի համար: Միթէ կարծում էք սրով ու հրով կը ջնջէ հային: Ո՛չ, երբեք: Կրակ և արեան հայը շատ է տեսել, բայց, ինչպէս տեսնում էք, նա կենդանի է. ուրեմն հայի մէջ կայ մի ուրիշ բան, որին չէ սպանում ոչ սուրը, ոչ հուրը... դա ներքին մի ոյժ է, որ չէ ենթարկվում ոչ մի հալածանքի... դուք կաւերէք, կայրէք նրա տունը, եկեղեցին, բայց նա նորից մըլինէ պէս կը սկսէ աշխատել, կը շինէ նորը և աւելի լաւը, այդ, աւելի լաւը: Դուք չէք սպանի նրա մէջ կենսունակութիւնը: Նա կը յարմարվի միջավայրին, նա գոյութեան կուռն կը զինվի բոլոր միջոցներով կենսելու պայքարում թոյլ չը մնալու համար. չէ որ իրականացը ու ժողովն է և եթէ չես ուղում յաղթված լինել, պէտք է ուժեղ լինես—ուժեղ մասնոր և հոգեկան կարողութեամբ, և մինչև անգամ ֆիզիքական ոյժով: Հայը բնագոյով հասկացել է այդ:

Այո, տեսնում էք, որ սրով և հրով չէք սպանի հային, այլ միայն մի առ ժամանակ թէ ձեզ և թէ մեզ յետ կը մղէք առաջադիմութեան շաղկիւղ: Բայց կայ աւելի ժամանակակից գոյութեան կուռն ձև. դա ազատ կուռնութեան մրցակցութիւնն է. համեմատ, ասպարէզը բաց է... Հայը սովոր է ճակատագրի հարաձայններին, իսկ հալածանքները միայն կը միացնեն հայերին:

Այժմ մեր աւերված գեղերն ու արտերը, տներն ու եկեղեցիները վերականգնեցնելու հարցը պէտք է լինի հայի համար պատեր հարց. պէտք է միահամուռ ոյժերով վերստին կողմէ կողքերով. պէտք է դարձանել նոր բացված վերքերը, պէտք է սփռել թարմ արտասուքները:

Թող ամեն մի հայ չը խնայէ իր լուծանք, թող ամեն մարդ աշխատէ ինչով կարող է, ինչպէս կարող է—թէ ներթափանց և թէ բարոյապէս:

Գանի աւելի են բարդվում հանգամանքները, այնքան աւելի և աւելի շատանում են մեր պարտականութիւնները մեր երկրի առաջ: Որքան գործ կայ կատարելու, բացվում են մեր դպրոցները, բարեգործական ընկերութիւնները. ահա մի ասպարէզ ազատ քաղաքացիական գործունէութեան համար. թող երևան գան գործող ոյժերը:

Սօֆիա Դանիէլեան

Սմօլնակ

ԱՆԳԼՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԻՆԸ ԲԱԳԻՈՒՄ (Իրաւաբանական հարց)

Բազում վերջին աղետից զգալի փոփոխութիւն նաեւ անգլիական ֆինանսները: Ամբողջ անգլիական մասնով թէ քաղաքական թերթերը և թէ յաղագայէն նախադասի արդիւնաբերութեան նուիրվածները («The Petroleum Review» և «The Petroleum World») ընդարձակ յօդուածներ են հրատարակում Բազումի գէպերի մասին:

Անգլիական ֆինանսների ճնշման ներքոյ անգլիական դեպարտմէն պահանջել է, որ յառաջիկայ երկուամսեայ ճիւղապետ նշանակվի Բազումի անգլիական շահերը պաշտպանելու համար և 4 օր յետոյ՝ այդ ֆինանսների Բազումի ընդհանուր կառավարիչը «Leslie Urquhart» հաստատվել է փոխ-հիւպատոս: Այժմ հարց է յարուցված թէ պարտաւոր է ուսումնականութիւնը հասունացնել անգլիացիների ֆինանսները: Հարցի իրաւաբանական տեսակէտը շատ լաւ պարզված է «The Standard» լուրջ թերթի սեպտեմբերի 15-ի համարում: Առաջ ենք բերում այդ կարեւոր յօդուածի զլխաւոր մասերը:

Բազումի սոսկալի անկարգութիւնները՝ միջազգային չափազանց մի կարեւոր հարց է ծագում: Աւերվել է բրիտանական հզատականութիւնը անհաղթ արժէք ունեցող կայքը: Գանի որ այս աւերումը ուղղակի հետեանք է ուսումնականութեան անկարգութիւնները զսպելու անկարողութեանը, հարց է ծագում թէ այս կառավարութիւնը պատասխանատու է անգլիացիների ուղղակի և անուղղակի կոտորածներին համար:—Հարց չը կայ այն մասին, թէ կորուստ կրողները իրականում ունենալու ևս ունենալու դատարաններին դիմելու ուսումնական կառավարութեան դէմ: Անհաւանական է թըվում թէ ուսումնականութեան այդպիսի իրաւունք ունենան. աւելի ևս անհաւանական է նոյն բանը օտարազգայութեան համար: Բայց հարցը ուրիշ հիման վրա պէտք է դնել: Մի պետութիւն այն ժամանակ միայն ազգերի գերզստանի մէջ է ընդունվում (այսինքն քաղաքակրթեալ ազգ է համարվում), երբ նա հասնում է քաղաքակրթութեան որոշ աստիճանին: Այս աստիճանը պարտաւորեցնում է այդ պետութեան, որ նա ամենայն բանաւոր հոգածութիւն ցոյց տայ, որ նրա արտապետութեան տակ գտնված երկրում չը պատահէ այնպիսի գէպեր, որոնք քաղաքակրթութեալ կառավարութիւններին իրեն ապօրինի գործեր են ճանաչվում:

Եթէ այսպիսի հոգածութիւն ձեռք չէ առնված և դրանից հետեան է ֆրանս օտարազգայութեան, այն ժամանակ այդ պետութիւնը պէտք է լրիւ հատուցանէ դրանց հասած ֆրանս և կամ պէտք է միջազգային արտօնութիւններ ունենալուց դադարի: Ուրիշ խօսքերով, ապօրինութիւնը կը դառնայ պետական մի գործ, որը պէտք է մաքրվի: Մի պետութիւն, որ պահանջում է քաղաքակրթութեալ պետութեան իրաւունք, չէ կարող պատասխանատուութիւն խոյս տալ, ասելով թէ ինքն անկարող է իր սեփական հպատակների գործողութիւնները վրա հանել...

Ի հաստատութիւն այս սկզբունքի, անգլիական թերթը բերում է քաղաքակրթ յիշատակութիւններ իրաւաբաններից և յօդուածը վերջացնում է այսպէս.

Ուսումնականութեան պատասխանատուութիւնը Բազումի անգլիացիների կորուստների համար իրօք ամեն կասկածից դուրս է, թէ ընդհանուր սկզբունքների և թէ համանման գէպերի հիման վրա, 50 տարե առաջ Don Pacifico-ի հետ պատահած գէպը ճիշդ դրա նման է: Յունական կառավարութիւնը մերժում էր հատուցանել Դոն Պասիֆիկո անունով մի հրէայի (անգլիականացու) կորուստները, որ նա ունեցել էր Աթինքում յիշապետութեան միջոցին և բրիտանական մի նաւատորմի գնաց Գրէյթի նաւահանգիստը պաշարեց: Եթէ Ռուսաստանը չէ կարող ներքին կարգ պահպանել, նա հաւասարվում է 21-րդ դարին, Թիւրքիային և Մարոկկոյին: Իսկ եթէ նա այդ կարող է և չէ պահպանում, ուրեմն նա պատասխանատու է կամաւոր անհոգութեան համար: Ռուսաստանը, իրօք, մի միջազգային անիրաւութիւն (tort) է գործել և բրիտանական կառավարութիւնը պէտք է հոգայ, որ նա վճարէ որդկած ֆինանսները:

Ս.

ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒԻ ԿՈՒՐՍՈՐԻ ԱՌԻՐՈՎ

Հայոց դպրոցները բացվում են. դա արդէն մի անգամ ավելի փաստ է: Բայց որքան դժուարութիւններ պէտք է հանդիպի հոգեւոր վարչութիւնը այս գործին բաւարար ընթացք ապրու համար:

Դպրոցական տները խաբուել դրութեան են հասել, կահկաքասները, ուսումնական ձեռնարկները և այլն և այլն, մասամբ կորել, մասամբ փչացել են, բայց ամենից աւելի դժուար ուսուցչական հարցն է: Մեր վարժուհիները մեծ մասամբ հեռացել են ուսումնական ասպարէզից, նմանապէս և վարժապետները օրական հաց վաստակելու համար գտել են իրանց համար ուրիշ գործեր: Այս հարցը մեծ նշանակութիւն ունի և կարող է շատ ուսումնականների բացվելուն արգելք լինել, ուստի դրա մասին անմիջապէս ասածել է հարկաւոր:

Մենք ունենք Թիֆլիսում ստուար թուով իգական դիմադրայի դասընթացն աւարտած օրիորդներ, բայց, դժբաղդաւոր, մայրին լեզուին անտեղեկ. ուսումնական վարչութիւնը ահա սրանց միջից պէտք է ընտրէ վարժուհիներ:

Հարկաւոր է որքան կարելի է շուտ հիմնել հայոց լեզուի կուրսեր մի տարվայ դասընթացով, այդ ժամանակամիջոցը բաւական է

արդէն ուսումնական և ինտելիգենտ օրիորդներին սովորելու հայերէնը: Իմ կարծիքով Յովնանեան—Մարիամեան ուսումնական ընկերակցութեան հայոց ուսումնականութիւնը այս մեծ ծառայութիւնը մատուցանելու: Կովկասի ուսումնական վարչութիւնը անկասկած կը քաջալերէ այս նախաձեռնութիւնը, քանի որ պետական տարբերակ ուսումնականութիւն կայ դասաւանդութիւնը կատարել մայրենի լեզուով, ուրեմն նաեւ կարօտութիւն կունենան լաւ պատրաստված վարժուհիներին:

Վերջացնելով գրութիւնս, դիմում եմ Յովնանեան Մարիամեան ուսումնական վարչութեանը ուղղութիւն դարձնելու իմ առաջարկութեան վրա:

Կ. Վարձիւեան

ՆԱՄԱԿ ՆՈՐ. ԲԱՅ ԶԵՏԻՑ

Սեպտեմբերի 7-ին

Կիրակի ամսին 4-ին, հոգաբարձական ընտրութիւն էր նշանակված տեղիս դպրոցական գործերը վարելու համար: Գաղաքի բազմամասերից իւրաքանչիւրը մի թերթի վրա ստորագրել տալով իր ծխականներին հրաւիրում էր ս. Կարապետ եկեղեցին, որի գաւթում պատարագից յետոյ կատարվելու էր ընտրութիւնը: Սակայն նշանակված ժամին ծխականները օրինաւոր թիւ չը լինելու համար՝ ժողովը չը կայացաւ և ընտրութիւնը յետաձգվեց ամսին 8-ին: Այդ օրը նոյնպէս կասկածելի էր ժողովի կանոնադրութիւնը, քանի որ մեր ժողովուրդը երեւի չէ հետաքրքրվում ազգային և ուսումնական գործերով և չէ գալիս ժողովի: Միթէ պէտք է միշտ յիշեցնել, որ դպրոցների վերաբացմամբ նորից մեծ կարիք է դրացվում երիտասարդ թարմ ոյժերի գործունէութեան: Ուրեմն թող առաջ դան հասարակութեան անձնուէր, իրտակ երիտասարդ մարդիկ՝ դպրոցական առաքելները գործեն համար: Ժողովուրդը ուղղակի կարօտ է այդպիսի երիտասարդութեան: Սակայն ինչ ենք ասում. մեզանում միթէ կայ երիտասարդութիւն, կայ, այսպէս ասած՝ գործողներ մի խումբիդեան դասակարգ, որը բացի իր անձնականից, իր գրպանի շահերից, ձեռնհաս լինէր նաեւ հասարակական և ազգային գործերին: Բայց և այնպէս յոյսերս չը կորենք. ժողովուրդը արդէն մտքով բարեփոխված է մասամբ. կը գան մարդիկ գործելու և հասարակական անկեղծ սրտով առաջ բերու համար:

Մշակի № 175-ում իմ գրած թղթակցութեան մի փոքր սխալ է մտել.—Բ. Նալբանդեանից և Տ. Տէր. Միքայէլեանից յափշտակված տոււարի նախիրը ոչ թէ 200, այլ 300 հատ է եղել աւելի քան 10,000 բուրբի արժողութեամբ: Անցեալ օրը, տեղիս գաւառապետը յայտնեց վերոյիշեալ անասնաւորներին, որ Գորիսում արդէն ըսել են մեր գաւառից տարած անասունները և պատերից որ, գնան և ճանաչեն իրանց աղբարները, խոստանալով ուղեկից պահապան տալ նրանց:

Գ. Միսանեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՐՈՒՑ

Գօկչայ, 12 սեպտեմբերի. Գօկչայի գաւառապետ Կոչաչկոսկին, որը իր զինուորներով գնացել էր գնահելու հայերին կողոպտողներին, ամսին 8-ին վերադարձաւ Գօկչայ, բերելով իր հետ հայերին կողոպտող 8 թուրք, որոնց ճանաչել և ցոյց են տալու ոստիկանութեան հայերը: Այդ կողոպտուած տեղի է ունեցել Գորիսում իր մասում, Արաք Մանուկի գիւղի, որ Գորիսում արդէն ըսել են մեր գաւառից տարած անասունները և պատերից որ, գնան և ճանաչեն իրանց աղբարները, խոստանալով ուղեկից պահապան տալ նրանց:

Յովն. Մարգարեան

Մեղրի, 9 սեպտեմբերի: Ամսին 9-ին, առաւօտեան ժամին 11-ին, Մեղրի ժամանեց ալիւրից Լուի Նապօլեօնը, որը ընդունեց ալ ու հաց և ճաշելով, երեկոյեան ժամին 3-ին մեկնեց Օրդուբաթ: Ամսին 6-ին երեկոյեան գէտ մի բանի զինված թուրքեր Տաշուզն հայ գիւղի մի հօտ զինարք բռնւում տանում են հօտ վրաների ոտն ու ձեռքերը կապողներով: Հօտ վրաներից մէկը մի կերպ կապանքները արձակելով՝ գիշերվայ կիսին գիւղ հասնելով:

Երեկոյեան Գիւղապետից մի բանի հոգի գնում են հաւաքի. նրանք հասնելով Թիւթուրը գիւղի սահմանը, գտնում են իրանց ոչխարները խառնված նրանց հօտի հետ, հայերին խուզված, իսկ թուրքերին չը խուզված: Հայերից մի երկու հոգի դիմում են Բոնակոթ գիւղի տանուէրին, որը իր ստրամբիկներով գալիս է ոչխարների մօտ և սկսում է յետ ընել ոչխարները, Թիւ գիւղացիները յայտնում են իրանց մօտ եղող հօգիւններին, որ հայեր եկել և իրանց թուրքերի ոչխարները քշում տանում են: Նրանք հաւատարմով տեղ են հասնում և սկսվում է գնդակահարութիւն: Սպանվում է տաշուզնից Առաքի Սարգսեանը և թիւց վիրաւորվում է Բոնակոթի տանուէրը: Հետեանքի մասին յետոյ:

Ամսին 7-ին, երեկոյեան գէտ Ծիրանաձոր գիւղի ամառանոցից երկու տղաներ և մի աղջիկ, 16 տարեկան, երեք ջորի ցորեն բարձած գիւղ գալիս՝ ճանապարհին 7 զինված թուրքեր բռնում են տղաներին և աղջկան ու տանում բաւական տեղ: Տղաներին վերմակով ծածկելով բնացնում են: Նրանք գիշերը արթնանալով տեսնելով ոչ որ չը կայ, վերադառնում են իրանց ամառանոցը և յայտնում երեկոյեան: Նրանք պատում են, որ աղջկայ երեսը այլ ևս իրանք չը կարողացան տեսնել թուրքերի ճանկը ընկնելուց յետոյ: Երկու գէպն էլ յայտնվեց լաւառապետին, որը խիստ կարգադրութիւններ արեց:

Ե. Վարդանեան

Շամախի, 13 սեպտեմբերի: Վերջին ամիսնուրդեպերի սկզբից մինչև այժմ մեր քաղաքը խաղաղ գերբնուելով, ապացուցեց, որ նա ժամանակին ըմբռնել է անհամբարախութեան բոլոր շարիքները: Եթէ մինչ այժմ այստեղ որ և է ընդհարում տեղի չէ ունեցել, այդ տեղիս մահմեդական հոգեւորականութեան ջնդրին է, որը իր հօտի մէջ յուզումը կամ սպանական դիրք նկատելով գէպի հայերը, միշտ գալիս է նրան բարոյապէս: Առաւօտեան դասակարգն էլ պակաս ազդեցութիւն չէ ունեցել այդ գէպում. նա ամիսն ընդամենը մասն մէջ նկատելով իր շահերի մեծ ֆրստը, բոլոր ոյժերով ձգտել է սանձած պահել յուզված ամբոխի մտքերը: Այժմ թէ և թուրքերի և հայերի յարաբերութիւնները սառն են, բայց և այնպէս դեռ ոչ մի ընդհարում տեղի չէ ունեցել այստեղ:

Վերջին հայերը Փոխարքային զօրք խնդրեցին քաղաքը ապահովութեան մէջ պահելու համար, որովհետեւ տեղապահ գործի թիւը շատ չնչին էր: Զօրքը եկաւ, սակայն ոչ սպասածի չափ: Այդ առիթով թուրքերը բոլոր են յայտնում հայերի գէտ, ասելով թէ՛ ինչու էք զօրք բերել տալիս, քանի որ առանց այդ ձգտում ենք խաղաղութեան: Թուրքերն ասում են, որ իր թիւ գործի գալը գրգռում է առաջ բերում հասարակ դասակարգի մէջ և դրանից կարող են անկարգութիւններ ծագել: Բայց հասարակ դասակարգի մէջ սկզբից, և այժմ էլ նկատելի է եղել այդ գրգռված գրութիւնը, որը եթէ առաջ զսպվել է, այժմ էլ կարելի է աղբիւրով գալիս նրան: Զօրքը գաւառում լինէ այլ նպատակ կարող է ունենալ, եթէ ոչ հանդարտեցնել նոյն հասարակ դասակարգը անկարգութիւնների ժամանակ:

Մ. Ազարեան

Լէնքօբան, սեպտեմբերի 12-ին: Կովկասի թուրք-հայկական ընդհարումները բաւական դալիւ ազդեցութիւն են գործել նաեւ Լէնքօբան քաղաքի ազգաբնակչութեան վրա, որի մէջ ապաստան են գտել բաւականաչափ փախուցաններ Կովկասի գնաւզան քաղաքներից, գլխաւորապէս Բազումից, այդ փախուցանականներին մի քանի հոգի կաշառված լինելով Բազումի թուրքական գլխաւոր կօմիտէից, սկսել են Լէնքօբանում իրանց ֆուսսակար պօռազանդան հայերի դէմ, որոնց թիւը 100-ից աւելի չէ, ինչպէս որ ինձ ասացին այստեղ: Այդպէս ընդհարման առաջին օրերու համար տեղիս գաւառապետը իր տրամադրութեան տակ ունի մօտ 200 զինուոր. նա շուտով կը առնայ յաւ մի հարիւրեակ: Բազումից թուրք փախուցանականները պօռազան գնաւզան հայերի թիւը Լէնքօբանում ունենայ, որ վիստե տեղական խաղաղ և սշխտաւէր «գիւղականք» բարբոթին չեն հաւակում թուրքական շարժման և բուական հաշտ են ապրում տեղիս հայերի հետ: Մի քանի օր առաջ օյստեղ գիւղերի է Ե-ն Լեզգու գէպերի բնական քանուկ և նախազգուշացրել է տեղական ազգաբնակչութեան իրան լաւ պահելու: Արդարէլ է...

դարձում բազմաթիվ թուրքերից սպանվել է թուրքական խորհրդարանը:

Լ. Բարսեղյան

Յոգնա, (Գողթան գաւառ) սեպտեմբերի 8-ին. «Մեր կողմերում գրութիւնը գնալով չէ բարձրացում, այլ աւելի ևս խայտառակ կերպարանք ստանում: Տեղի թուրքաբնակ գիւղում գտնվող ուսուցիչները կամաց-կամաց թրքաւոր են դառնում: Ամսիս 7-ին պատահեց մի դէպք, որ ցոյց է տալիս մեր այդ ասածը: Երեք դպրոցւորդներ (Չանգեղուրի գաւառ) հայեր գալիս են Գողթան գաւառի փառակա գիւղը և յայտնում թէ տեղի թուրքերը դաշնաւոր են 400 ոչխար: Հետքերով գալով հասել են Տեղի գիւղը: Փառակա գիւղի մէկը, (ստորաշինայի օգնականը), մի քանի հայ տղամարդ, խնդրելով վերցնում է իրանց գիւղում գտնված գինւորներից 10 հոգի և դաշնաւորները հայերի հետ գնում ոչխարները գտնում և քնում որ բերին: Փառակա: Տեղի թուրքերը իրանց կողմից վերցնում են Տեղում եղած գինւորներին և Փառակի գիւղից եկած գինւորներին և հայերի ետեւից ընկնում և սկսում գնդակահարել դրանց: Այդ ժամանակ Փառակայի գինւորները որքան էլ կանչում են. «не стреляйте, это мы!» — ուղարկութիւն չեն դարձնում: Փառակա եկած գինւորները թողնում են հօտը և հայերին և փախչում: Տեղից եկած ուսուցիչները և թուրքերը խփում են տեղի ու տեղը սպանում հայ մեկին, իսկ դաշնաւորներից երկուսին ծանր վիրաւորում: Այդպիսով տեղի թուրքերին աշուղվում է մոլորեցնել ուսուցիչներին, դրանց ձեռքով սպանել տալ տանտէրի օգնականին, վիրաւորել երկու հայի և յետ քշել կրկին դաշնաւորներից յայտնել խաբարը:

Երևանի փոխ նահանգապետը մի քանի օր առաջ եկած էր Օրդուբաթ: Թուրքերը գանգաւորներն ուսուցիչներին, որի ամբողջ մեղքը այն է, որ աշխատում է ամեն կերպ զսպել թուրք աւազակաբարոյ և մարդասպան վրէժակների արհեստագործ տեղերը հայերի նկատմամբ: Փոխ-նահանգապետը դարձնում է պրիստաւի ուղարկութիւնը այդ գանգաւորներին: Մարդ շուտով վերջ չէ տեսնում այդ խառնակ գրութեան, որովհետեւ տեղական պոլիցիան և ադմինիստրացիան ինքնիշխան շարունակում է հաւկա-հայկական տնտեսական, շարեւէ Պարսկաստանում շատ կարճ միջոցում իշխանութիւնը կարողացաւ զսպել թուրքական արհեստագործ ինստիտուտները: Միթէ դժուար է նոյնը անել և մեզանում, թողնելով սենտիմենտալ заигрывание-ն թուրքերի հետ:

ՆԱՄԱՆԻՆԻՍ ԽՄԲԱՊՈՒԹԵԱՆ

I

Չուրդուշա գիւղ, օգոստոսի 26-ին

Ձեր յարգելի «Մշակ» լրագրի 137 համարում գտնված էր Կարսից մի անյայտ անձ-նաւորութեան նամակ՝ որի մէջ հեղինակը անխղճորէր ցանկանալով ինչ վարկաբեկ անել Կարսի և նրա շրջակայքի հայ ժողովուրդի և կառավարութեան առաջ, ինչ վրա բարդում է մի անասելի զրգարանութիւն, որպէս թէ ես լինելով Կարսի շրջանի Չուրդուշա գաւառում գտնվող ազգեցիկ անձնաւորութիւն, զգուշացնում եմ այն-տեղի դարափափախ թուրքերին հայերի դէմ և որպէս թէ ես այդպիսի վարկաբեկ համար ես ստացած եմ պ. նահանգապետից նկատողութիւն և յանդիմանութիւն:

Որովհետեւ այդպիսի ամբողջ գործ ես երբեք չեմ կատարած, և կերպիւրեալ նամակի հեղինակը ինչ անյայտ մի անձ է, որի դէմ անխղճորէր ես դատ բանալ, ուստի խնդրում եմ Ձեզ, ողորմած տէր, չը մերժել զետեղել Ձեր յարգելի լրագրի մտաւայ համարներից մէկում այս իմ հերքումը:

Այնքան զրոյցով, Կարսի և նրանց շրջակայքի ամբողջ հայ ժողովուրդը, մանաւանդ նրա ինտելիգենտ դասը ինչ ամեն կողմերով շատ լաւ է ճանաչում փոքր հասակիցս ի վեր: Դրա համար պետքը եմ համարում գրել իմ անձնաւորութեան մասին. միայն անհրաժեշտ եմ համարում գրել որ թէ ես, թէ իմ նախնիքը և թէ ընդհանրապէս ամբողջ մեր դարափափախ թուրք ժողովուրդը ապրել ենք հայ ժողովուրդի հետ սերտ բարեկամական յարաբերութեան մէջ և մինչև այժմ երբեք մեր մէջ չէ պատահած ոչ մի թուրք-մացութիւն և ընդհարում:

Երևանի նահանգի հայ-թրքական անկարգութիւնները միջոցին ես գտնվում էի Կարսում և երբ Կարսի ժողովուրդական դատարանի գործունէութիւնը ընդհատուց մինչև աշուն, որտեղ ես գտնվում եմ որպէս անգամ նոյն դատարանի, իւրաքանչիւր ամբողջ նման իմ ընտանիքով տեղափոխվելիք Չարիշա գաւառում մասնաւոր ինքնագործ գիւղը, իմ տունը:

Այնտեղ ես նկատեցի՝ որ Երևանի նահանգի կոտորածները շարունակ դարափափախները չափազանց յուզված դրութեան մէջ են:

Մեր գաւառումս յարստաւելի ձեռք առած եւանդալիստ միջոցները, իմ և մի քանի ուրիշ ազգեցիկ անձնաւորութիւնները եւանդալիստ միջոցառութեան շնորհիւ միայն դարափափախները խաղաղեցին և ամբողջ գաւառում մասնաւոր վերականգնեց լիակատար խաղաղութիւնը:

Մինչև այսօր ես չեմ կորցրել գիւղում, մըշտ ապրել աշխատում եմ խաղաղ պահել մեր դարափափախներին՝ որպէս զի միշտ ամեն պահի մեր բարի դրացիական յարաբերութիւնը հայերի հետ և այս բոլորը հաստատուած է նրանով՝ որ Բագուի, Երևանի և Նախիջևանի կոտորածներից սկսած մինչև այժմ ոչ մի ընդհարում և նոյն իսկ ոչ մի թուրք-մացութիւն չէ պատահած մեր, մեզ անձնականից շնորհաբալի, Չարիք և Աղապա գաւառումս թուրքերի և հայերի մէջ:

Ես քրտնով միայն չունեմ գովել հայերին, այլ ես կատարում եմ և կատարել եմ իմ մարդկային պարտականութիւնը, որպէս վայել է ամեն մի անհիւ մարդու:

Այն, երբ ես առաջին անգամ աշխատեցի խաղաղացնել մեր դարափափախները յուզված մտքերէ՝ նահանգապետը կանչելով ինձ էր մօտ, պահանջեց տեղեկութիւն և ես մանրամասն յայտնեցի նրան եղելութիւնը: Նահանգապետն ինքը անձամբ շրջապատելով ամբողջ Չարիք-Կարս գաւառումս և ամեն տեղ նկատելով ժողովուրդի խաղաղ արածագրութիւնը, շնորհակալութիւն յայտնեց մեր պրիստաւին, ինչ և ուրիշ առաջադրու մարդկանց մեր գործը դրած ջանքի համար ժողովուրդին խաղաղացնելու գործում: Կարսի պ. նահանգապետը ինչ երբեք նկատողութիւն և յանդիմանութիւն արած չէ՝ որին պարզ ապացոյց է այն, որ ես մինչև այժմ գտնվում եմ ծառայութեան մէջ:

Կարսի-Երևանի Հաշի Վալի-օղլի

II

Ախալքալաք, 15 օգոստոսի

Մերանով յայտնում եմ իմ և իմ որդուս կողմից մեր խորին շնորհակալութիւնը Ախալքալաքի հասարակութեան, հոգեւորականութեան, հայ թէ օտար, Ախալքալաքի գաւառապետին, օգնականին, տեղիս զորքերի պ. պ. գնդապետին, ընդհանրապէս տեղապահին, և այն ամեն հեռավոր և մօտաւոր ծանօթներին և բարեկամներին, որոնք կամ անձամբ, կամ նամակ-ներով, կամ այսպէս թէ այնպէս պատուեցին և սիրովեցին մեր վիրաւոր ու կսկծոտ սրտերը, ամուսնուս, Աշուղ Գրիգորեանի մահ-հուան ժամանակ: Աշուղեանի անուանի թա-գուհի Գրիգորեանից:

ՆԵՐՔԻՆԻ ԼՈՒՐԵՐ

«Մշակ» ներկայ համարը բաղկացած է 11/3 թերթից:

Կովկասի Փխարաբայի ոստիկանական մասի օգնական գն. մայոր Շերինիլին հեռագրում է ներքին գործերի մինիստրին օգնական գե-ներալ Տրեպոլին. «Բագուից գեղեցիկացում եմ, որ գլխավոր ընթացքում մինչև այժմ թէ ընդհանրապէս և թէ նախապետներում խաղաղ է, Բերե-Հէյբաթում 8 նախաձեռնեք վերսկսեցին աշխատանքները»:

«ԿԱՅԱՅ» լրագրի պաշտօնական բաժնում ապրիլ է, որ թիֆլիսի բաղադրադրուս վեր-միջանը, իր խնդրերը համաձայն, աբձակ-վում է պաշտօնից:

Գինեբալ Բիւլիւս հրաժարվելուց յետոյ, թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգա-պետ նշանակված է կովկասեան երկրորդ զո-ւարանակի արտիլլերիայի հրամանատար գե-ներալ Լեյտենանտ Վ. Թ. Թիլեյսը:

Թիֆլիսի բաղադրադրուս պաշտօնական ար-տիլլան 25-րդ օրը սեպտեմբերի 16-ին թիֆ-լիսի նահանգապետին է ներկայացրել դուռայի իրաւասունքի յայտագիրը, որով նրանք հրաժարվում են իրանց պաշտօնից: Դուռայի բոլոր ծայնաւորներից մնում և չեն հրաժար-վում միայն 18 ծայնաւոր:

Վրաստանի էկզարխը կազմել է 4 յանձնա-ժողով, որոնք պէտք է ծրարել մշակել վրաց եկեղեցու վարչութեան վերակազմութեան և վրաց եկեղեցական շրջանի կարգաւորման մասին: Այդ աշխատանքները պէտք է տարվեն այնպէս, որ մինչև նոյեմբերի 1-ը պատրաստ ու ներկայացված լինի ս. Մինոսին:

